

## ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ\*

### Սոֆյա Օհանյան

**Բանալի բառեր**՝ մշակույթ, պատմամշակութային ժառանգություն, արտաքին քաղաքականություն, մշակութային դիվանագիտություն, ազգային դիմագիծ:

Առանց մշակույթի՝ անհնար է պատկերացնել ժամանակակից պետությունների կյանքը և նրանց զարգացման հեռանկարները: Մշակույթը ժողովրդի անկախության, ինքնորոշման ու ինքնատիպության զարգացման, պահպանման, ամրապնդման գործընթացի հիմքն է և մեծապես պայմանավորում է ազգերի ու ժողովուրդների հաստուկ հոգեկերտվածքը, հաստատում հումանիստական արժեքների ժառանգորդումը, ստեղծում նրանց համաշխարհային վարկանիշը:

Արդի դարաշրջանում մշակույթի և զանգվածային լրատվամիջոցների գլոբալացումն ազգային կառավարություններին խթանում է արտաքին գործերում կիրառել մշակութային գործիքներ, ինչի հետևանքով շրջանառության մեջ է դրվել «մշակութային դիվանագիտություն» հասկացությունը: Մշակութային դիվանագիտությունը կարող է արդյունավետ կերպով լրացնել կառավարության միջազգային ռազմավարությունը, ինչն արդիական է առաջին հերթին այն երկրների համար, որոնց վարկանիշը և ազդեցությունը չեն համապատասխանում իրենց քաղաքական հավակնություններին, ռազմական կամ տնտեսական ռեսուրսներին [1]: Դա է պատճառը, որ որոշ հետազոտողներ մշակույթը բնորոշում են որպես արտաքին քաղաքականության «երրորդ չափում» [2]:

Մշակութային դիվանագիտությունն իր այժմյան տեսքով ձևավորվել, արտաքին քաղաքականության լիարժեք մեթոդ է վերածվել XX դարում [3] և դիվանագիտական ծառայությունների օրակարգում հաստատվել սառը պատերազմի ընթացքում, ինչի հետևանքով արտասահմանյան կառավարություններում հայտնվեցին մշակույթի հարցերով հատուկ կցորդներ և հյուպատոսներ:

Արտաքին քաղաքականության մեջ մշակութային գործիքների օգտագործումն սկսվել է շատ ավելի վաղ, քան ձևավորվել է մշակութային դիվանագիտության տեսական հիմքը: Միայն XX-XXI դդ. սահմանագծին մշակութային դիվանագիտությունը տեսականորեն հիմնավորվեց «փափուկ ուժի» հայեցակարգի միջոցով, որը Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայր սահմանել է հետևյալ կերպ. «Փափուկ ուժը» ցանկալիին հասնելու ընդունակությունն է դաշնակիցների կամավոր մասնակցությամբ, այլ ոչ թե պարտադրման կամ սիրաշահման միջոցով» [4]:

Դիվանագիտության ժամանակակից մոդելի գլխավոր սկզբունքներից մեկի համաձայն՝ բանակցությունները և միջազգային այլ շփումները չպետք է ավարտվեն մասնակիցներից մեկի հանդեպ մյուսի հաղթանակով, այլապես դրանք ծնում են վիրավորանք և ռևանշի ցանկություն: Ամենաարդյունավետ դիվանագիտությունն ավարտվում է երկու կողմերի փոխադարձ բավարարվածությամբ: Մշակութային դիվանագիտությունն օգնում է գրավելու ընդդիմախոսին՝ ներգործելով նրա հույզերի վրա, ինչը նշում են շատ դիվանագետներ՝ ընդգծելով, որ որոշ դեսպանություններ նախընտրում են ազդել տվյալ երկրի արտաքին քաղաքականության վրա ոչ թե ուղղակիորեն, այլ իրենց կենսակերպի քարոզման ճանապարհով՝ մշակելով իրենց երկրի հանդեպ քաղաքական համակրանք [5]:

\* Հոդվածն ընդունվել է 25.12.17:

Հոդվածը տպագրություն է երաշխավորել փ.գ.դ., պրոֆեսոր Ա.Սարգսյանը:

Արտաքին քաղաքականության կարիքների համար մշակույթի ներգրավման անհրաժեշտությունը բխում է հանրային դիվանագիտության հայեցակարգից, որը երկրների մեծամասնության պրակտիկայում հաստատվել է XX դարի երկրորդ կեսին: Դրա իմաստն այն է, որ դիվանագետներն իրենց արտաքին քաղաքականության հարցերով կարող են դիմել այլ երկրի բնակիչներին՝ շրջանցելով տվյալ երկրի կառավարությանը: Եթե այդ բացատրությունները բարյացակամորեն ընդունվեն, տվյալ երկրի հասարակական կարծիքը ճնշում կգործադրի իր կառավարության վրա [6]: Քանի որ հանրային դիվանագիտությունը վերաբերում է լայն զանգվածներին, նա պետք է հասկանալի ու հաճելի լինի զանգվածային գիտակցությանը, այսինքն՝ օգտագործի վառ ու հիշվող կերպարներ, ցանկալի է՝ տեսողական, որովհետև տեղեկատվության մեծ մասը մարդն ստանում է տեսողությամբ: Այդպիսի կերպարները կարելի է և պետք է ստեղծել մշակութային գործողություններով, որոնք նախորդում կան ուղեկցում են հանրային դիվանագիտությանը:

Ուստի մշակութային դիվանագիտությունն անհնար է առանց երկրի ներսում նախապատրաստական աշխատանքի, ամենից առաջ, առանց մշակութային անհրաժեշտ պաշարի ստեղծման, ինչը պահանջում է պետական լիարժեք քաղաքականության անցկացում և իշխանության մարմինների լայն շրջանակների, մշակութային կազմակերպությունների ու մասնավոր անձանց՝ ստեղծագործ անհատների ջանքեր, այսինքն՝ հետևողական աշխատանքներ: Ազգային որևէ բնագավառի միջազգային գրավչության մասին կարելի է դատել ըստ այն բանի, թե միջազգային հանրությունը որքան է պատրաստ վճարելու դրա արտադրանքի համար: Բնականաբար, սա մշակույթի հանդեպ բավական ուտիլիտար մոտեցում է, որը չի կարող լիովին գնահատել նրա ներգործությունը մարդու գիտակցության (առավել ևս՝ ենթագիտակցության) վրա: Բայց ժամանակակից պայմաններում դա փոքրաթիվ չափողական մեթոդներից է, որը թույլ է տալիս համեմատել առանձին երկրների ու դրանց մշակութային տարրերի ժողովրդականությունը: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ մշակութային դիվանագիտությունն իր բնույթով շատ ընդհանրություններ ունի մարկետինգի ու գովազդի հետ: Կարևոր է հասկանալ, որ մշակութային դիվանագիտությունը հաշվարկված է երկարատև կիրառման ու ռազմավարական հեռահար նպատակների հասնելու համար: Դա կարող է առևտրային շահույթ բերել միայն շատ տարիներ անց, երբ ներկայացվող երկրի մշակութային արժեքները կմտնեն օտարերկրյա հասարակության ամենօրյա կյանք:

Մշակութային դիվանագիտությունը տարվում է երկու ուղղություններով՝ արտերկրում և ներկայացվող երկրում: Արտերկրում մշակութային դիվանագիտության ուղղություններն են միջոցառումների հովանավորությունը, ներկայացվող երկրի մշակութային տարվա, շաբաթվա կամ օրերի կազմակերպումը, դեսպանություններում այդ երկրում հայտնի մշակույթի գործիչների ներգրավումը: Ներկայացվող երկրում մշակութային դիվանագիտական գործունեության առանցքային տարրերն են՝ գեղարվեստական մշակույթը, բարձրագույն կրթությունը, գիտությունը, սպորտը, զբոսաշրջությունը:

Սահմանափակ ռեսուրսների պայմաններում դիվանագետների համար կարևոր է իմանալ, թե իրենց ազգային մշակույթի որ մուշներն ունեն արդեն կայացած ժողովրդականություն արտերկրում: Այդ գիտելիքները թույլ են տալիս օպտիմալացնել օտարերկրյա գործողությունների համար անհրաժեշտ նյութական ծախսերն ու ստեղծագործական ջանքերը:

Օտար լսարանի առանձնահատկությունների և համաշխարհային մշակույթի ժամանակակից տարածքում ազգային տեղի չհասկացումը կարող է մասնակիորեն կամ լիովին խոչընդոտել դրված նպատակներին հասնելուն, ծայրահեղ դեպքում՝ նույնիսկ վատթարացնել պետության միջազգային վարկանիշը: Արտերկրում մշակութային միջոցառումներ պլանավորելիս հարկ է հաշվի առնել տեղական հասարակության մեջ սեփական երկրի մասին դրական ու բացասական կարծրատիպերը: Երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի մասին իրական տեղեկատվության հանդեպ ազատ մատչելիությունը օտարերկրացիներին թույլ է տալիս ինքնուրույն ձևավորել նրա

մասին այնպիսի պատկերացում, որին նրանք կվստահեն: Մշակութային դիվանագիտության հանդեպ քարոզչական մոտեցումը, առանց իր գործողության տակ դրված մշակութային պաշարի որոշակի քանակի ու որակի, առաջացնում է նրանց անվստահությունը, ուն այն հասցեագրված է: Առանց սեփական երկրում որոշակի մշակութային պաշարի կուտակման արտերկրում մշակութային միջոցառումների պարզ հաճախացումը նշանակալի արդյունքի չի հանգեցնի: Եթե կառավարությունը ձգտում է մշակութային ներգործություն ունենալու օտար լսարանի վրա, նա պետք է իր երկրի ներսում ստեղծի պայմաններ ստեղծագործական ներուժի բացահայտման, ազգային մշակույթի արտադրության տեխնոլոգիաների զարգացման ու փոխանցման համար, որպեսզի մշակութային նյութն արտահանվի ասես ինքնին, իսկ դիվանագետները միայն ճշգրտեն այդ հոսքը: Հետևաբար, ազգային մշակութային ժառանգության օբյեկտները պետք է ներկայացվեն խելամիտ ու ստեղծագործաբար:

Այսպիսով մշակութային ժառանգության տնտեսական և քաղաքական ռեսուրսների մոբիլիզացումը երկրի ռեզեներացայի հիմքն է: Այս համատեքստում Արցախի համար մշակութային ժառանգությունը կարող է ունենալ նույն նշանակությունը, ինչ որոշ երկրների համար՝ բնական ռեսուրսները, նավթը կամ ոսկին: Գեղագիտական բարձր որակները և պատմական միջավայրի պահպանվածության աստիճանը կարող են ապահովել Արցախի ներդրումային գրավչությունը, նրա իրական առևտրային արժեքը, նպաստել միջազգային հարթակում համագործակցության ընդլայնմանը, հանդիսանալ Արցախի Հանրապետության բնակչության բարեկեցության գրավականը:

Այդ նպատակին հասնելու համար մշակութային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է մշակել հետևողական, համալիր գործողությունների ծրագիր, որը սահմանափակ ռեսուրսների պայմաններում թույլ կտա առավելագույնս գրավիչ ներկայանալ միջազգային հանրությանը: Հայտնի է, որ աշխարհում մշակութային «նյութի» արտադրության մեջ հիմնական ռեսուրսներին տիրապետում է ԱՄՆ-ն, որտեղ գտնվում են խոշորագույն կինոստուդիաները, հեռուստաստուդիաները, երաժշտական ընկերությունները, ամենահեղինակավոր համալսարանները, առաջավոր գիտական ինստիտուտները, սպորտային ակադեմիաները և այլն: Ժամանակակից մշակույթի արտադրության երկրորդ տեղում Եվրոպան է: Իսկ զարգացող երկրները կարող են առաջնություն ունենալ համաշխարհային մշակույթի առանձին ոլորտներում, եթե դրան նպաստում են բնական կամ պատմական պայմանները: Օրինակ, հնդկական Բոլիվուդն ամեն տարի արտադրում է արևելյան երկրներում բավական ժողովրդականություն վայելող մեծաթիվ ինքնատիպ կինոնկարներ, իսկ Եգիպտոսը միլիոնավոր զբոսաշրջիկների է գրավում ճարտարապետական հնագույն հուշարձաններով և ծովափնյա հանգստավայրերով:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Արցախի ներուժը մշակութային դիվանագիտության ասպարեզում կարելի է եզրակացնել, որ արտաքին մշակութային քաղաքականության գերակայություն կարող է դառնալ պատմամշակութային ժառանգության գրազետ կառավարումը: Քանի որ այստեղ առկա են զբոսաշրջային հոսքերի ներգրավման համար անհրաժեշտ ռեսուրսները, Արցախի մշակութային քաղաքականության մեջ առաջին հերթին կարող է ներառվել զբոսաշրջությունը՝ որպես ժողովրդի մշակութային ինքնադրսևորման հանդեպ հետաքրքրության բավարարման, մշակութային կապերի ստեղծման և միջազգային համագործակցության հաստատման կարևոր եղանակ: Հետևաբար, անհրաժեշտ է գտնել Արցախի ազգայնորեն յուրահատուկ դիմագիծը և շեշտադրել մշակութային ինքնատիպությունը, իսկ դա կարելի է իրագործել մի շարք ուղղություններով.

1. Արցախը ներկայացնել որպես համաշխարհային քաղաքակրթության բնօրրաններից մեկը՝ առանձնահատուկ ընդգծելով, օրինակ, Ազոխի քարանձավի հնագիտական ուսումնասիրությունը: Հայտնի է, որ այս քարանձավը քարի դարի կովկասյան հնագույն բնակավայրերից մեկն է, որն առաջնակարգ նշանակություն ունի ոչ միայն նեանդերթալցու կազմախոսության վերականգնման տեսակետից, այլև հաստատում է այն պնդումը, որ Հայաստանի տարածքը մտնում է անթրոպոգենեզի և մարդու վաղ

բնակեցման շրջանի մեջ: Այստեղ գտնված նեանդերթալցու ծնոտը գիտական գրականության մեջ դասվում է 5-րդ համարի տակ. մինչ այդ նեանդերթալցու մնացորդներ հայտնաբերվել են ընդամենը չորս վայրում:

2. Արցախը ներկայացնել որպես քրիստոնեական մշակույթի հնագույն և կարևորագույն օջախներից մեկը: Այս առումով դիտարժան են, օրինակ, Դադիվանքը և Գանձասարը: Մասնավորապես, Դադիվանքը ոչ միայն Արցախի հնագույն ճարտարապետական համալիրներից մեկն է, որը V դարից եպիսկոպոսական նստավայր էր, և որտեղ XII դարում միառժամանակ բնակվել և իր «Դատաստանագրքի» վրա է աշխատել Մխիթար Գոշը, այլ և, ավանդության համաձայն, հիմնվել է Քրիստոսի առաքյալներից Թադեոսի հետևորդ, քրիստոնեության քարոզչության և հավատի համար նահատակված Դադիի գերեզմանի տեղում I դարի II կեսին: Ինչ վերաբերում է Գանձասարին որպես ճարտարապետական ստեղծագործության գլուխգործոցի [7], նշանակալի կրոնական խորհրդանիշի ու ազգային-ազատագրական շարժման օջախի, միջնադարյան Հայաստանի արվեստի, աստվածաբանության ու գիտության կենտրոնի, ապա պատմական աղբյուրները տեղեկացնում են, որ այստեղ են ամփոփված համաքրիստոնեական ու ազգային սրբերի մատուցներ, որոնցից նշանավորը Հովհաննես Մկրտչի գլուխն է, որը թաղված է տաճարի զոհասեղանի տակ:

3. Արցախը ներկայացնել որպես քաղաքակրթությունների խաչմերուկ: Այստեղ հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Տիգրանակերտը և Շուշին: 2005 թ. հայտնաբերված Տիգրանակերտ քաղաքը համացանցում մանրամասն ներկայացված, հանրությանն առավել քաջածանոթ, ամենաշատ այցելվող հնագիտական հուշարձանն է Արցախում, որը պատկերանում է որպես հելլենիստական ու վաղքրիստոնեական հարուստ մշակույթի կենտրոն: Տարածաշրջանում նոր ժամանակներում համանման գործառույթներ է կատարել Շուշին, որը, 1847 թ. ստանալով քաղաքի կարգավիճակ և գտնվելով կենտրոնական Անդրկովկասի ռազմավարական կարևոր վայրում XIX դ. 60-ական թթ. Անդրկովկասի՝ մեծությամբ չորրորդ քաղաքն էր, նաև Արցախի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոնը, որ մեծապես նպաստել է հայկական նոր մշակույթի հարստացմանն ու զարգացմանը: Այստեղ է ձևավորվել Արցախի հասարակական-քաղաքական միտքը, հայկական գիտամշակութային ընտրախավը:

4. Մահմեդական հուշարձանների առկայությամբ և դրանց հանդեպ ԱԶ իշխանությունների վերաբերմունքով ընդգծել Արցախի մշակութային տոլերանտությունը, ինչը թույլ կտա գրավել մահմեդական աշխարհի՝ չափավոր տրամադրված հատվածի համակրանքը: Մասնավորապես շեշտադրել այն հանգամանքը, որ այստեղ վերանորոգվել և կոնսերվացվել են երեք մզկիթներ՝ Շուշիի Վերին մզկիթը, Ստորին մզկիթը և Աղդամի մզկիթը, ինչպես նաև Շուշիի Վազիֆի մեդրեսեն ու Մեհ Մանդարովի աղոթարանը:

5. Ցույց տալ Արցախի մշակույթի շարունակականությունը ներկայացնելով արցախցու մշակութաստեղծ գործունեության արդյունքների առկայությունը պատմական տարբեր դարաշրջաններում: Դրա օրինակներից է հաչեմագետի ներքնահովիտը՝ բնապատմական յուրօրինակ միջավայրով, ուր բնապատկերը համալրվում է բրոնզ-երկաթեդարյան, հելլենիստական, քրիստոնեական մշակութային հզոր ժառանգությամբ:

Թվարկված դրույթները, իրենց հերթին, նախադրյալներ կհանդիսանան՝ հիմնավորելու հայի բնիկ լինելը տարածաշրջանում և նրա պատմական իրավունքներն իր հայրենիքում, հակադրվելու հարևան երկրի քարոզչությանը և պաշտպանվելու նրա սանձազերծած տեղեկատվական պատերազմից:

Այս խնդիրներով զբաղվելու համար անհրաժեշտ է համապատասխան գործառույթների տիրապետող գերատեսչություն: Օգտագործելով այս ոլորտում աշխարհի առաջատար երկրների փորձը (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա)՝ կարելի է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կառուցվածքում ստեղծել մշակույթի հարցերով զբաղվող ենթակառուցվածքային միավոր, որը կզբաղվի մշակութային դիվանագիտությամբ՝ ուղղված բազմակողմ և երկկողմ մշակութային, գիտատեխնիկա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

կան, կրթական և հումանիտար մյուս ոլորտներում կապերի հաստատմանը և համագործակցության զարգացմանն ու խորացմանը նպաստող քաղաքականություն ձևավորելուն, կնպաստի միջազգային ասպարեզում համապատասխան բնագավառների վերաբերյալ Արցախի Հանրապետության պաշտոնական ռազմավարության ու հայեցակարգի ներկայացման, հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության, Արցախի գիտատեխնիկական զարգացման և հումանիտար հարցերի մասին տեղեկատվության պատշաճ մատուցման ուղղությամբ

- կոորդինացնելով ոլորտի կառույցների (ԱՀ էկոնոմիկայի նախարարության տուրիզմի վարչություն, հասարակական կազմակերպություններ, հետազոտական կենտրոններ, խորհուրդներ) աշխատանքները,

- ստեղծելով և կառավարելով հիմնադրամներ՝ դրանց աշխատանքներում ներգրավելով արտերկրի հայ մեծահարուստներին,

- ապահովելով Արցախի պատմամշակութային ժառանգության լիարժեք ներկայացվածությունը համացանցում,

- խթանելով հնագիտական ուսումնասիրություններ,

- արտերկրում կազմակերպելով ցուցահանդեսներ, մշակութային օրեր և այլն,

- անցկացնելով մրցույթներ և շնորհելով մրցանակներ,

- հովանավորելով արտերկրի ուսումնական հաստատություններում սովորող հայ և օտարազգի պատանիներին,

- իրականացնելով նախագծեր արվեստի և սպորտի բնագավառներում:

Գրագետ և համակարգված մշակութային քաղաքականությունը թույլ կտա հաղթահարել պատնեշները տարասեռ մշակույթների միջև, հաստատել միջմշակութային երկխոսություններ, փոխադարձ շփման ու համագործակցության եղանակով ծանրակշիռ ներդրում ունենալ կոնֆլիկտների կանխման ու լուծման մեջ: Ուստի արդարացված է արտաքին մշակութային քաղաքականությունը համարել ներդրում ապագայի մեջ, որը կնպաստի արտերկրում Արցախի դրական կերպարի ստեղծմանը:

Այսպիսով՝ մշակութային գործիքները սերտորեն մտել են արտաքին քաղաքականության հավաքակազմ: Մշակվել են արդյունավետ մեթոդներ ու հնարներ, հասկանալի են դարձել միջազգային հարաբերությունների օտարերկրյա մասնակիցների վրա մշակույթի ազդեցության սահմանները: Մշակույթն ընդունակ չէ փոխարինելու արտաքին քաղաքականության ռազմական գործիքները, ինչպես նաև լիովին չի փոխհատուցում միջազգային տնտեսական ռեսուրսների պակասը: Սակայն համաշխարհային քաղաքական և տնտեսական ասպարեզում բարձր դիրքեր չզբաղեցնող երկրներն այս կամ այն կերպ պետք է զբաղվեն արտասահմանում ազգային մշակույթի ժողովրդայնացմամբ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ մասին տե՛ս Ս. Կոզլով, Применение культурных инструментов в современной внешнеполитической практике // Вестник Челябинского государственного университета. Политические науки. Востоковедение. 2012. Вып. 12, էջ 7:
2. Տե՛ս Н. Павлов, Культура – третье измерение внешней политики // URL: <https://interaffairs.ru/jauthor/material/1572>
3. Ճիշտ է, նրա գործողության սկզբունքը՝ օտարերկրյա գործընկերոջը հրապուրելն ազգային մշակույթի արտեֆակտերի օգնությամբ, դիտվում է նվերների փոխանակման դիվանագիտական վաղեմի պրակտիկայում: Որքան շքեղ ու տեխնիկապես կատարյալ էր մատուցվող առարկան, այնքան ավելի լավ տպավորություն էր ստեղծում իր երկրի ստեղծագործական ու արտադրական ներուժի մասին: Սակայն մշակութային դիվանագիտության կանոնավոր օգտագործումն սկսվեց

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև: Հիտլերյան Գերմանիայի, ստալինյան Ռուսաստանի և արևմտյան դեմոկրատական երկրների գաղափարախոսական պայքարում մշակույթը պետք է ապացուցեր այս կամ այն քաղաքական վարչակարգի առաջադիմությունը: Մշակութային դիվանագիտության վրա բավական արդյունավետ կերպով անդրադարձավ սառը պատերազմը: Մրցակցող գերտերություններն աստիճանաբար սովորեցին ռազմական ժամանակի կոշտ և ուղղագիծ քարոզչության փոխարեն նրբորեն ներգործել զանգվածային գիտակցության վրա: ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի մշակութային-գաղափարախոսական հակամարտությունն ընթանում էր նաև քաղաքական-տնտեսական մոդելի ընտրության հարցում տատանվող այլ երկրներում: Սառը պատերազմը ցույց տվեց, որ տնտեսական կամ ռազմատեխնիկական անմիջական օգնությունը պակաս արդյունավետ է համախոհների ձեռքբերման հարցում, քան հուզական համերաշխությունը:

4. Дж. Най, “Мягкая” сила и американо-европейские отношения // Центр исследований постиндустриального общества. М., 2004. URL: <http://postindustrial.net/2004/11/myagkaya-sila-i-amerikano-evropejskie-otnosheniya>
5. Стéв В. Попов, Современная дипломатия: теория и практика. Дипломатия – наука и искусство: курс лекций. М., 2003, էջ 215-216:
6. Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Т. Зонова, Современная модель дипломатии: истоки становления и перспективы развития. М., 2003, էջ 141-154:
7. XX դարի սկզբին Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, արվեստի պատմաբան Շառլ Դիլի (1859-1944) կազմած ցուցակի համաձայն՝ համաշխարհային ճարտարապետության գանձարանը հարստացնող հայկական կոթողային արվեստի հինգ գլուխգործոցներն են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին (915-921 թթ.), Վաղարշապատի Սուրբ Հռիփսիմեի վանքը (618թ.), Հաղպատի վանքը (X դար), Անիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին (հիմնադրված 1001թ.) և Գանձասարի Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցին (XIII դար): Աղթամարի Սուրբ Խաչ տաճարից հետո Գանձասարն ունի դեկորատիվ բարձրաքանդակային մախչազարդի ամենամեծ քանակությունը՝ Հայաստանի մյուս ճարտարապետական համալիրների համեմատ: Միգուցե դա է պատճառը, որ վանքի ուսումնասիրությանը երկար տարիներ նվիրած խորհրդային հայտնի պատմաբան ու արվեստաբան, էրմիտաժի գիտական խորհրդի անդամ Անատոլի Յակոբսոնը հոյակերտ տաճարն անվանել է «հայկական ճարտարապետության հանրագիտարան»:

## **ԱՄՓՈՓՎԳԻՐ**

### **Արցախի պատմամշակութային ժառանգության քաղաքական նշանակությունը Սոֆյա Օհանյան**

Այսօր մշակութային գործիքները սերտորեն մտել են արտաքին քաղաքականության հավաքակազմ: Դրանց կիրառման ժամանակահատվածում մշակվել են արդյունավետ մեթոդներ ու հնարներ, հասկանալի են դարձել միջազգային հարաբերությունների օտարերկրյա մասնակիցների վրա մշակույթի ազդեցության սահմանները: Մշակույթն ընդունակ է փոխարինելու արտաքին քաղաքականության ռազմական գործիքները, ինչպես նաև լիովին չի փոխհատուցում միջազգային տնտեսական ռեսուրսների պակասը: Սակայն համաշխարհային քաղաքական և տնտեսական ասպարեզում բարձր դիրքեր չզբաղեցնող երկրներն այս կամ այն կերպ պետք է զբաղվեն արտասահմանում

ազգային մշակույթի ժողովրդայնացմամբ: Այս տեսանկյունից ուսումնասիրելով Արցախի ներուժը մշակութային դիվանագիտության ասպարեզում կարելի է եզրակացնել, որ արտաքին մշակութային քաղաքականության գերակայությունը կարող է դառնալ պատմամշակութային ժառանգության գրագետ կառավարումը:

### **РЕЗЮМЕ**

#### **Политическое значение историко-культурного наследия Арцаха Софья Оганян**

**Ключевые слова:** культура, историко-культурное наследие, внешняя политика, культурная дипломатия, национальный облик.

Сегодня культурные инструменты прочно вошли в систему внешней политики: разработаны эффективные методы и приемы, поняты границы воздействия культуры на иностранных участников международных отношений. Культура не способна заменить военные инструменты внешней политики, а также полностью компенсировать недостаток международных экономических ресурсов. Однако страны, не занимающие высоких мест на мировой политической и экономической арене, так или иначе должны заниматься за рубежом популяризацией национальной культуры. С этой точки зрения, исследуя потенциал Арцаха в области культурной дипломатии, можно сделать вывод, что приоритетом внешней культурной политики может стать грамотное управление историко-культурным наследием.

### **SUMMARY**

#### **Political significance of the historical and cultural heritage of Artsakh Sofya Ohanyan**

**Keywords:** culture, historical and cultural heritage, foreign policy, cultural diplomacy, national character

Currently cultural instruments have tightly entered to the set of foreign policy tools. During the period of their application efficient methods and skills were developed, the scale of impact of culture on foreign participants of international relations were clarified. Culture is not capable to replace the military instruments of foreign policy, as well as don't fully compensate the lack of international economic resources. However, countries which aren't dominant in global political and economic scenes should somehow popularize national culture abroad. From this point of view studying the potential of Artsakh in the area of cultural diplomacy one can conclude that competent management of historical and cultural heritage can be foreign cultural policy priority.